

իսկ դու բանալի եղեր քառաթև, բացեր մեզ զդուռն անեղաշէն դրախտին, զոր փակեաց նախահայրն :

Քանզի 'ի քեզ է միացեալ մարմնով բանն Աստուած, գառն պատարադեալ, բարձողն մեղաց և եզն պարարակ, զոր ծնաւ Մարիամ :

Եւ դու ինքնին 'ի քեզ կրեցեր բազկատարած՝ առհաւասար ծայրաթաց ներկար արեամբ որդւոյն Աստուծոյ 'ի քեզ բեեմամբ :

Եւ յահաւոր և 'ի հրախաղաց միայն վերջնումն յետին շարաթին, դու կարապետ յապագային, և առիթ քեզ յամեցելոյ փեսային, 'ի պարծանս ազգի մարդկան :

Եւ մեք յուսով ակն կայցուք քեզ յաղթող նշան, զէն անպարտելի և առիթ ևս յաջմէ որդւոյն Աստուծոյ, 'ի պարծանս երկրպագուաց :

Ձի և զմեզ արասցես լինել արթունս և պատրաստս և արժանս, ջահավառ անշէջ լապտերօքն մտանել 'ի յառագաստ ընդ իմաստուն կուսանան, յեօթնս աստեղեան յառագաստն, ուր սուրբք ամենայն հաւաքեալ սպասեն մեծի հարսանեացն և անմահ փեսային :

ՏԵՍԱՐԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՑԵՂԻ

ՈՎԿԻԱՆԻԱ

Ճաւա լեռնոտ կղզի մըն է. լեռանց վրայ երեսուն հրաբուխէն աւելի կան, և այն պատճառաւ գետնաշարժ ստէպ կ'ըլլայ հոն. հարաւային կողմը աւելի ապառաժուտ է, իսկ հիւսիսային կողմը դաշտային. և օդն ալ լճացեալ ջրերուն պատճառաւ փնասակար, որով հոն գացող եւրոպացիներէն շատը շուտով կը մեռնին. տաքը ընդհանրապէս սաստիկ է, իսկ կղզւոյն ներսի գաւառներուն կլիման աւելի լաւ է : Գլխաւոր բերքերն են քաֆէ, շաքար, լեղակ, պղպեղ. մահացու թոյն ունեցող հիւթով տեսակ մը ծառ ալ կայ որ աւելաւ կամ պօսնուշխաւ կ'ըսուի : Զորքոտանի վայրի կենդանիներէն քիչ կը գտնուի ճաւայի մէջ, եղաճներն են վազը և եղջերու. ջրերու մէջ ալ կան պզտի կոկորդիլոսներ. անտառներուն մէջ ալ օձեր ունի, և անբաւ բազմութիւն ալ կայ տեսակ մը ճերմակ մըր :

Ջիւններու որ տներու կահ կարասիքը կը փճացրնեն :

Բուն ճաւացիները ինը միլիոնէն աւելի կը սեպուին, և Հնդկաց ազգակից կը կարծուին ըլլալ. բնութեամբ ծոյլ ու վախկոտ են : Եւրոպացւոց հոն ոտք կոխելէն առաջ բոլոր կղզին մէկ թագաւորութիւն մըն էր, և շատ բարեկարգ ինչպէս որ կ'երևնայ : Լեզուին՝ Հնդկաց լեզուէն առաջ եկած է. սըրբազան լեզու մը ունին որ խաւի կ'ըսուի՝ որ սանսքրիտի մօտ է. իսկ ծովեզերեայ բնակչաց խօսած լեզուն սուրսու կ'ըսուի :

Ճաւացիք 1406ին Մահմետի կրօնքը ընդունեցան, և իրենց թուականը Քրիստոսի 73 տարինէն կը սկսի. մէջերնին բազմակնութիւնը օրինաւոր կը սեպուի :

Հոլանտացւոց առաջին անգամ հոն ոտք կոխած ատեննին՝ չորս տէրութիւն



Ճաշացի՝ պատերազմական զգեստով .

Կար ճաւայի մէջ՝ որք էին Պանդամ, Եաքադրա, Չէրիպոն և Մադարամ. այս ետքինս ինչուան հիմա կայ, իսկ առջինները Հոլանտացիներէն նուաճուեցան. 1619ին Հոլանտացիք շինեցին Պադաւիա քաղաքը՝ կղզւոյն արևե-

լակողմը՝ խորունկ ձորի մը մէջ ուսկից շատ վտակներ կ'անցնին. բայց օդը շատ միասակար է, որով բնակիչներն ալ երթալով քիչցած են, և հիմա 118,000ի չափ միայն կան, որոնց մէջ քսան տուներ չափ Հայ վաճառականներ ալ կան :



Կաքաշիչ 'ի ճաշաւ .

Մէջի ուրիշ զվարար քաղաքներն
են Պեւթենցորկ , Չէրիպոն , Սամա-
րանկ , Սուրուպայա՝ որ ճաւայի յառա-
ջադէմ քաղաքներէն մէկն է : Հոլան-
տացիք Մադարամի թագաւորութիւնը
երկու բաժնելով՝ երկու իրարու հակա-

ռակ իշխաններու յանձնեցին . արեւ-
լեան կողմի իշխանը Սուլդան ըսուեցաւ՝
որ կը նստի Չոքչոքգարդա քաղաքը .
իսկ արեւմտեան կողմինը Սուսունամ
ըսուեցաւ՝ որ Սոքրոքարդա կը նստի .
ասոնք որչափ ալ որ իրենց իշխանու-



Թեանցը մէջ ազատ են, սակայն Հո- | անկախ չեն, որոնք ամուր քաղաքներ
լանտացւոյ օրէնքներէն ալ բոլորովին | ունին երկրին մէջ:
